ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հակակարկտային ցանցերի ներդրման աշխատանքներին մասնակցության հայտեր ներկայացնելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի նիստում N 37 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի **«Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման»** ծրագիրը, որը տեղադրված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքում՝ http://minagro.am/%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%AF%D5%BF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D6%81%D5%A1%D5%B6%D6%81%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D5%A5%D6%80%D5%A4%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1/ :

Ծրագրին մասնակցել ցանկացող, հակակարկտային համակարգեր ներդնող այն մասնագիտացված կազմակերպությունները, որոնք բավարարում են Ծրագրի 32-րդ կետի 2) ենթակետով սահմանված պայմաններին, կարող են հայտ ներկայացնել Նախարարություն:

Ստացված հայտերի հիման վրա մասնագիտացված կազմակերպությունների ցանկը, նաև վերջիններիս գործունեության և կատարած աշխատանքների մասին լրացուցիչ տեղեկատվությունը (առկայության դեպքում) կտեղադրվեն Կայքում:

Ծրագրի շրջանակներում կսուբսիդավորվեն միայն այն տնտեսավարողներին (վարկառուներին) տրամադրված վարկերը, որոնց հողատարածքներում հակակարկտային ցանցերի ներդրումն իրականացվում է վերը նշված ցանկում առկա մասնագիտացված կազմակերպություններից մեկի կողմից:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

$